# Արձանագրություն N 2-1

## ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/25 ՀՀ Սյունիքի մարզի գ. Քարաշենի միջնակարգ դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.09.2025թ.

ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մնացականյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հյուսիսյան

Է. Առուստամյան

Ա. Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ն. Ղազարյան

**1.Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

( Հ. Մնացականյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 11:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «123» ՍՊԸ | 46 871 510 | 35 500 000 | 7 100 000 | 42 600 000 |
| 2 | «Սմարթտեխ» ՍՊԸ | | 36 545 875 | 7 309 175 | 43 855 050 |

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**2. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն**

-----------------------------------------------------------------------------------------

( Հ. Մնացականյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «123» ՍՊԸ | ՀՀ ք. Գորիս, Սյունիքի 97 | 077 66 61 61 | 123llc.ab@gmail.com, |
| 2 | «Սմարթտեխ» ՍՊԸ | ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գորիս, Սյունիքի փ., տ. 125 | 094 23 76 00 | smartex77@mail.ru |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

**3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

-----------------------------------------------------------------------------------------

( Հ. Մնացականյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը 100 000 000 ՀՀ դրամից պակաս չլինելու մասին,

2. ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, հայտը ներկայացնելու նախորդող 3 (երեք) տարիների ընթացքում ընդհանուր գումարային 1 000 000 ՀՀ դրամը գերազանցող նախկին պայմանագրային պարտավորություններով պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:40-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Հ. Մնացականյան

------------------------------ Ա. Հյուսիսյան

------------------------------ Է. Առուստամյան

------------------------------ Ա. Նալբանդյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Գ. Հակոբյան